# ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում առաջարկվող փոփոխությունների մասին

| N | Առաջարկությունների և առարկությունների հեղինակը, ամիս-ամսաթիվը | Առաջարկությունների և առարկությունների բովանդակությունը | Եզրակացություն |
|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 |
| 1 | ՀՀ արդարադատության նախարարություն (ելք՝ N Ե 5818, 01.11.2007թ.) | Առաջարկություններ և դիտողություններ չունի | |
| 2 | ՀՀ քաղաքաշինության նախարարություն (ելք՝ N ՔՆ-26/4082,22.10.2007թ.) | Առաջարկություններ և դիտողություններ չունի | |
| 3 | ՀՀ առողջապահության նախարարություն (ելք՝ N 12/5-11-5454, 24.10.2007թ.) | Առաջարկություններ և դիտողություններ չունի | |
| 4 | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ելք՝ N 6/1-3317-11799, 06.11.2007թ.) | Հայաստանի Հանրապետության 2008-2010 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի» նախագծով վերոնշյալ որոշման նախագծով հաստատվելիք հավելվածում ընդգրկված՝ «Մարզադպրոցների և մարզական քոլեջների նյութատեխնիկական բազայի ամրապնդում, անհրաժեշտ մասնագիտական մարզագույքի և մարզասարքերի ձեռքբերման և բաշխման աշխատանքների համակարգում», «ԱՊՀ երկրների միջազգային մարզական խաղեր», «Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների 2-րդ մարզական խաղեր», «Պատանեկան օլիմպիական խաղեր», «Համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում և գործարկում» միջոցառումների իրականացման նպատակով ծրագրեր նախատեսված չեն: | Չի ընդունվել: «ԱՊՀ երկրների միջազգային մարզական խաղեր», «Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների 2-րդ մարզական խաղեր», «Պատանեկան օլիմպիական խաղեր» մարզական միջոցառումների կանոնակարգերը ստացվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2008-2010թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնելուց հետո: Կարևորվում է ՀՀ միջազգային հեղինակության ամրապնդումը, միջազգային մարզական կառույցներում երկրի ներգրավվածության աստիճանի բարձրացումը, միջազգային մրցասպարեզներում, հատկապես օլիմպիական խաղերին, համաշխարհային և մայրցամաքային առաջնություններին, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տարածաշրջանային և այլ համալիր մրցաշարերին մասնակցելու միջոցով երկրի վարկանիշի բարձրացումը: ՀՀ վարչապետի մոտ 2008թ. ՀՀ պետական բյուջեի քննարկման ժամանակ որոշվել է «Մարզադպրոցների և մարզական քոլեջների նյութատեխնիկական բազայի ամրապնդում, անհրաժեշտ մասնագիտական մարզագույքի և մարզասարքերի ձեռքբերման և բաշխման աշխատանքների համակարգում», «Համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում և գործարկում» ծրագրերի ֆինանսավորումը իրականացնել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին: |
| | | Միաժամանակ առաջարկում ենք հստակեցնել «Բարձրակարգ մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործում» միջոցառման իրականացման ակնկալվող արդյունքներում նշված «Բարձրակարգ մարզիկների պատրաստման գործընթացի իրականացում» բառակապակցությունը: | Ընդունվել է: Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| 5 | ՀՀ պաշտպանության նախարարություն (ելք՝ N ՊՆ/510-739, 14.11.2007թ.) | Առաջարկություններ և դիտողություններ չունի | |

| | | | |
|---|---|---|---|
| 6 | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>(ելք՝ N 21-0610/1425, 25.10.2007թ.) | 1. 2-րդ էջում հստակեցնել «Մանկապատանեկան սպորտի մասսայականացում» միջոցառումը | Չի ընդունվել:<br>Մանկապատանեկան սպորտի մասսայականացումը ենթադրում է տարբեր տիպի սպորտային խաղերի, ֆիզիկական վարժությունների, սեմինարների միջոցով պատանիների ներգրավում մարզական գործընթացներում և առողջ ապրելակերպի գաղափարի շուրջ: |
| | | 2. 3-րդ էջում հստակեցնել «Միջպետական մարզական հարաբերությունների զարգացում» միջոցառումը | Չի ընդունվել:<br>Միջպետական մարզական հարաբերությունները տարբեր երկրների հետ փոխադարձ պայմանավորվածությամբ իրականացվող միջոցառումներն են |
| | | 3. 3-րդ էջի «հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների համադասում» միջոցառումը տեղափոխել 1-ին նպատակի մեջ | Ընդունվել է:<br>Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| | | 4. 6-րդ էջի 4-րդ միջոցառման մեջ վերաձևակերպել՝ «Ոչ ֆորմալ կրթության միջոցով դասընթացների....» | Ընդունվել է:<br>Տողը խմբագրվել է՝ «Ոչ ֆորմալ կրթության միջոցով դասընթացների (կրթական, իրավական, բնապահպանական, առողջ ապրելակերպի և այլ թեմաներով) շարունակական անցկացում: |
| | | 5. 7-րդ էջում 7-րդ նպատակի 2-րդ միջոցառման մեջ վերաձևակերպել՝ «երիտասարդական խմբերի……»: | Չի ընդունվել:<br>Նպատակահարմար չի գտնվում տալ երիտասարդ այցելուների քանակական որակում: |
| | | 6. 7-րդ էջում հստակեցնել՝ «Հոգևոր-դաստիարակչական ծրագրերի իրականացում» միջոցառումը: | Ընդունվել է:<br>Տողը խմբագրվել է՝«երիտասարդների ազատ ժամանցի ակտիվ և նպատակային անցկացմանը, հոգևոր-մշակութային դաստիարակությանն ուղղված |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միջոցառումների իրականացում»: |
| | | 7. 8-րդ էջում 8-րդ նպատակի 3-րդ միջոցառման մեջ վերաձևակերպել՝ «Հաշմանդամ և.....»: | Ընդունվել է:<br>Տողը խմբագրվել է՝ «Հաշմանդամ և խոցելի խմբերի երիտասարդների համար սոցիալ-հոգեբանական, կրթական ծրագրերի կազմակերպում»: |
| | | Միաժամանակ կառուցվածքի վերաբերյալ հայտնում ենք՝<br>1. Հավելվածով ներկայացված փաստաթուղթն, ըստ էության, իրենից ներկայացնում է միջոցառումների ցանկ, այլ ոչ թե ծրագիր | Չի ընդունվել:<br>Փաստաթուղթը ներկայացվում է պահպանելով ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 4-ի նիստի N 40 արձանագրության 6-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները: |
| | | 2. «Ակնկալվող արդյունք» սյունակում ամրագրվել են ոչ թե արդյունքները, այլ միջոցառումների կատարման ժամկետները՝ ըստ տարիների | Ընդունվել է:<br>Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| | | 3. Հստակ չէ «Նպատակների» և «Միջոցառումների» սահմանազատումը՝ համարակալված չեն նպատակներն ու դրանցից բխող միջոցառումները | Ընդունվել է:<br>Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| 7 | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>(ելք՝ N 1/17-2589, 25.10.2007թ.) | Առաջարկում ենք նախագծի՝<br>1. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ակտիվ քաղաքականության իրագործում» վերնագրի ներքո ընդգրկված միջոցառումների | |
| | | 1) 2-րդ տողում «տարածաշրջանային» բառը շարադրել «հանրապետական» բառից առաջ՝ ապահովելով մասշտաբային առումով տարածքների թվարկման հերթականությունը | Ընդունվել է մասնակի:<br>Որոշման նախագծից հանվել է «տարածաշրջանային» բառը: |
| | | 2) 7-րդ տողի 2009 թվական սյունակում «սկսում» բառը փոխարինել | Ընդունվել է:<br>Որոշման նախագծում կատարվել է |

| | | | |
|---|---|---|---|
| | | «նախապատրաստում» բառով, իսկ 2010-2011թթ. սյունակներում «շարունակում» բառը՝ «իրականացում» բառով. | համապատասխան փոփոխություն: |
| | | 2. «Բարձրակարգ մարզիկների պատրաստման համակարգի կատարելագործում» միջոցառման 2010-2012թթ. սյունակներում «Հաստատված» բառը փոխարինել «Ընդունված» բառով | Ընդունվել է: Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| | | 3. «Երիտասարդական պետական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացում և համակարգվածության ապահովում» վերնագրի ներքո ընդգրկված միջոցառումների՝ | |
| | | 1) 14-րդ տողում «Սոցիալապես անապահով» բառերը փոխարինել «Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների» բառերով: | Ընդունվել է: Տողը խմբագրվել է՝ «Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների երիտասարդների, երիտասարդական ներկայացուցիչների, ուսանողների, բանակից զորացրվածների համար համակարգչային և օտար լեզվի դասընթացների կազմակերպում, անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրում»: |
| | | 2) 27-րդ տողը խմբագրել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5.2 հոդվածի համաձայն, հաշմանդամների վերականգնման բազային ծրագրի մշակումը և դրա ապահովման իրականացումը վերապահված է հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտում պետական կառավարման մարմնին, իսկ | Ընդունվել է: Տողից հանվել է «վերականգնողական» բառը, այն խմբագրելով՝ «Հաշմանդամ և խոցելի խմբերի երիտասարդների համար սոցիալ-հոգեբանական, կրթական ծրագրերի իրականացման աշխատանքներին աջակցում»: |

| | | | |
|---|---|---|---|
| | | նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագիրն իրագործվում է սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջոցով: Հետևաբար, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը կարող է աջակցել նշված միջոցառման շրջանակներում իրականացվող աշխատանքներին, այլ ոչ թե կազմակերպել դրանք:<br><br>3) 28-րդ տողը խմբագրել, այն առումով, որպեսզի զբաղվածության երիտասարդական կենտրոնները երիտասարդներին խորհրդատվության և աջակցության տրամադրումն իրականացնելիս համագործակցեն «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային մարմինների և «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման» ՊՈԱԿ-ի հետ:<br><br>Միաժամանակ, առաջարկում ենք նախագծում նախատեսված միջպետական, համահայկական մարզական միջոցառումների շրջանակում նախատեսել նաև հաշմանդամների մասնակցությամբ սպորտային միջոցառումների իրականացում, մասնավորապես, պարալիմպիկ խաղերին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովում | Ընդունվել է:<br>Մարզային երիտասարդական կենտրոններում երիտասարդներին խորհրդատվության և աջակցության տրամադրման միջոցառումներում նախնական պայմանավորվածության համաձայն արդեն իսկ նախատեսված է համագործակցել «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային մարմինների և «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման» ՊՈԱԿ-ի հետ:<br><br>Չի ընդունվել:<br>Որոշման նախագծում ներառված միջոցառումները բխում են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջնաժամկետ ծախսերի ծրագրերից |
| 8. | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>(ելք՝ N 05-2300, 24.10.2007թ.) | Որոշման նախագծի վերնագրում առաջարկում ենք «գործունեության» բառից հետո ավելացնել «միջոցառումների» բառը | Ընդունվել է:<br>Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: |
| 9. | ՀՀ Նախագահի աշխատակազմ<br>(ելք՝ N Ղ - 2312, 18.12.2007թ. ) | Առաջարկություններ և դիտողություններ չունի | |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | ՀՀ պաշտպանության նախարարության Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ (ելք՝ N260, 26.09.2008թ.) | 1. Հաշվի առնելով ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից ներկայացված կողմնորոշիչները (կցվում է)՝ փաստաթուղթը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության համապատասխան դրույթների պարունակման, ծավալի և կառուցվածքի առումով վերամշակման կարիք ունի: Միաժամանակ հստակեցված չեն դրույթների իրագործման նպատակով հայթայթվելիք ռեսուրսներն ու կատարողները:<br>2. Համաձայն ներկայացված կարգավորիչների՝ պետք է հստակեցված և համադասված լինեն սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և մարզային ու քաղաքային տարածքային ինքնակառավարման մարմինների ծրագրերը՝ նրանց փոխհարաբերությունների ու համագործակցության շրջանակներում: Տվյալ սկզբունքը հնարավորություն կտա ճշգրտելու Ձեր և մարզային իշխանությունների ռազմավարական շահերի եզրերը՝ համադասելով հետաքրքրությունների ու ռեսուրսների հնարավոր համընկնումը ու հակասությունները: | Ընդունվել է:<br>Որոշման նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:<br><br>Ի պատասխան Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 17.09.2008թ. N1-01/787 գրության՝ ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի առաջարկությունները և դիտողությունները (ներքոհիշյալ 11-ից 18-րդ կետերը) ընդունվել են մասամբ: |
| 11. | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան (ելք՝ ՆՄ-1-1-636, 21.10.2008թ.) | Նոր մարզական բազաների ստեղծում և մարզաձևերի զարգացում: | |

| | | | |
|---|---|---|---|
| 12. | ՀՀ Արարատի մարզպետարան (ելք՝ N030/1956, 15.10.2008թ.) | 1. Արտաշատ քաղաքում մարզահամերգային համալիրի կառուցում,<br>2. Մասիս քաղաքում տիպային համալիր մարզադպրոցի կառուցում,<br>3. Մարզում լող մարզաձևը զարգացնելու նպատակով Արտաշատ քաղաքի /մարզկենտրոն/ մարզադաշտում գործող լողավազանի հիմքի վրա ծածկած լողովազանի կառուցում,<br>4. Մեծ թենիսի նկատմամբ հետաքրքրություն խթանելու նպատակով Արտաշատ քաղաքի մարզադաշտում թենիսի կորտի կառուցում,<br>5. Հրաձգության և մոտոսպորտի նախկին ավանդույթները պահպանելու և զարգացնելու նպատակով «Կարմիր սար» կոչվող տարածքում եղած հրաձգարանի և մոտոկրոսի հիմքերի վրա նոր, ժամանակակից չափանիշներին համապատասխանող մարզաբազաների կառուցում: | |
| 13. | ՀՀ Շիրակի մարզպետարան (ելք՝ N1-01/5212, 01.10.2008թ.) | 1. Գյումրի քաղաքում աթլետիկական մանեժի կառուցում,<br>2. Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցի ծածկած լողավազանի հիմնանորոգում: | |
| 14. | ՀՀ Սյունիքի մարզպետարան (ելք՝ N07/2-2631, 01.10.2008թ.) | Մարզի մարզադպրոցների բազաների հիման վրա ստեղծել բռնցքամարտի, ըմբշամարտի և սամբոյի խմբակներ: | |

| | | | |
|---|---|---|---|
| 15. | ՀՀ Արմավիրի մարզպետարան (ելք՝ N2795, 21.10.2008թ.) | Մարզում համապատասխան պայմաններ ստեղծելու դեպքում զարգացման հեռանկարներ ունեն՝ ըմբշամարտը, բռնցքամարտը, ծանրամարտը, ֆուտբոլը, սպորտային մարմնամարզությունը, աթլետիկան: | |
| 16. | ՀՀ Երևանի քաղաքապետարան (ելք՝ N01/13-22408h, 29.10.2008թ.) | Երևանի քաղաքապետարանը նպատակահարմար է գտնում մայրաքաղաքում զարգացնել զանգվածային ֆիզկուլտուրան ու սպորտը՝ բնակչության տարբեր խավերին ներգրավելով առողջարարական միջոցառումների մեջ: | |
| 17. | ՀՀ Արագածոտնի մարզպետարան (ելք՝ N2442, 13.10.2008թ.) | Աշտարակ քաղաքում կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան լողավազան, իսկ Ապարանի տարածաշրջանում ձմեռային մարզաձևերի մարզաբազա: | |
| 18. | ՀՀ Կոտայքի մարզպետարան (ելք՝ N4-16-3474, 03.10.2008թ.) | 1. Հրազդանի ձմեռային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի հիմքի վրա ստեղծել ձմեռային մարզաձևերի բազա,<br>2. Հրազդան, Չարենցավան, Բյուրեղավան և Նոր Հաճն քաղաքներում զարգացման հեռանկար ունի ֆուտբոլը: | |
| 19. | ՀՀ Լոռու մարզպետարան | Առաջարկություններ և դիտողություններ չի ներկայացրել | |
| 20. | ՀՀ Վայոց ձորի մարզպետարան | Առաջարկություններ և դիտողություններ չի ներկայացրել | |
| 21. | ՀՀ Տավուշի մարզպետարան | Առաջարկություններ և դիտողություններ չի ներկայացրել | |
| 22. | ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ (ելք՝ NԱխ-121, 11.11.2008թ.) | Առաջարկություններ և դիտողություններ չունի | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
**Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր**

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«11» 11 2008 թ.

Հ Ահխ-121

ՀՀ Սպորտի և երիտասարդության
հարցերի նախարար
պրն. Ա. Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակի շուրջ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ա. Բաղդասարյան

01-427
17.11.08

14 2ր/440
11 2008

«ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
ՄՏԻՑ N 3-1632
«12» 11 2008 թ.